

25. Հարցմանը Ս. Կուսին եւ պատասխանից Սի-
բյուրին էլ 197թ.—202ա:

26. Բառմուկի նվաճողներն էլ 203թ.—213ա:

27. Պատմութիւն թաւայրին փահրուի էլ 213թ.—216թ:
Աստուծոյ մէջ հին քն միայն թաւի է, 12, 16 եւ 17.
Մնացեալը աւելցուած են վերջին ստացողէն, բոլորովին
նոր ժամանակներ, այն է 1850—70: Մուրհանգրուան
մէջ էլ յիշուին 1761, 1762, 1785 թուականները իբր
օրինակ:

ՅԷԼ-ԳԼ-ԳԼ-ԳԼ-ԳԼ. 52թ. 1866ին յուլիսի 24ին
իվ որ Գարգայ մէկ ոգորմի առի սորոցը գրողին մկրտիչ
ստեփանեան բժիշկեանցա. Թաւրէժ լիւսաւայ:

53ա. 1871 ի թիւին նշյեմբերի մէկին գրեցաւ
գարլէժ:

102ա. 1875 յուլիսի 1ին:

168ա. 1875 սեպտեմբերի միւլին:

197թ. 1876 սեպտեմբերի մէկին գրեցի մկրտիչ
նն բժիշկեանց ի գաւրէժ:

202ա. Աւ իս մկրտիչ ստեփանեան բժիշկեանց
գրեցի ի գաւրէժ բաշխում 1859ին սեպտեմբերի 3ին:

218ա. 1866 — 1870 թուականներէն մէկերու
գեղեքեր, ինչ. 1866 թաւրիցի խոտբան, 1868 Գրիգոր
Էպի. ի այսեւութիւնը իշխածնէն, եւն:

(Հարաւստիւն)

Յ. Յ. ՆԵՄՈՒՆԵՆ



ԱՅԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ԱՐԱՐԱՐԻ ՄԱՏԵՆԱԳՐԻՆ ԿՈՆՍՏԱՆԻՍՏԱՆԻ

Նարոնի:

(Հարաւստիւն)

230 թ. Հայաստան ապստամբեցաւ: Արա-
րայի բնակիչք, երկրի իշխանք եւ մեծամեծները
խառնեցան, իսկ Զաքարի եւ Բար-էլ-աբաարի պե-
տերը տիրեցին սահմանակից երկրներին. սալ լիւանի
իշխանութիւնը թուրքացաւ:

Ամիրապետ Հարուն Առաջիկ նշանակեց խա-
լիգ ի. Եղիզ ի. Մաղհադիկ կառավարիչ (Հայաս-
տանի վերայ), նորա իշխանութեան առի գնելով
հրեանային Արարիոյ աւազգաւ մասն, եւս կցելով
գիւր Թարթուս ինչ ինչ քաղաքներ. իսկուք մի-
նեցաւ մեծ գործով: Առանելով այս լաւքը երկրի
իշխանը ահաբեկ եղան եւ տեղեկացրին նորան, որ
նորա ընդ գագաթէն հնազանդ լինել (ամիրապե-
տին), ուղարկելով նորան ընծաներ. իսկուք պա-
տասխանեց՝ «Ես մեղաւորից միայն ընծայ կ'ընդուն-
եմ»: Այս բանը սաստկացրեց նոցա դժգոհու-
թիւնը: Իսկուք հրամայեց (Տփղիսի իշխան) Խա-
հակ ի. Խամայէլին նորա մօտ դալլ թալից արովհե-
տեւ նա ջանաց, իսկուք արշաւեց նորա վերայ
եւ արդէն նորան յաղթելու մօտ էր, երբ հիւսն-
գացաւ եւ կարճ միջոցից յետոյ մեռաւ: (Նորա

ՏԵՐԻ ԿՈՆՍՏԱՆԻՍՏԱՆ, ԹԻՒ Տ. 6, էժ. 140—141:

մարմինը) գաղաղի մէջ տաւրեցաւ Գուսին եւ այն-
տեղ թաղեցաւ: Նորա ընկերները գրեցան, եւ
ամբողջ երկիրը տնկարգ դրութեան մէջ մնաց:

Վաղից գրեց Մուհամմադ ի. Խալիլին նորա
հօր փոխարէն, որ պատերազմեցաւ Դրանարների
եւ Խահակի հետ, մինչեւ նոցա հալածեց եւ ար-
տաքսեց (երկրի). այնուհետեւ Հայաստան բարե-
կարգ վիճակի մէջ էր:

235 թ. (Ջաֆար) Մուսափակիկ յանձնեց,
իւր որդի Իբրահիմ Մուսայի. Բիլլահին: Ատորիք,
Հայաստան եւ Ատրպատական, տալով նորան
քարտուղար Մուհամմադ ի. Ալի Մալուֆին: Միւս-
ժամանակ Մուսափակիկ հրամայեց, որ Իբրահիմ
քրիստոնեայ ընտելաներին օգնութեան կոչէ սալ-
թանին վերաբերեալ գործերում, իսկ եկեղեցիք
աւերէ:

(237 թ.) Հայաստան ապստամբեցաւ. բաղ-
մալիս տեղացի իշխաններ եւ այլք խռովեցան
եւ տիրեցին իրանց գաւառներին: Մուսափակիկ
նշանակեց Աբու Մայիք Մուհամմադ ի. Խաուսիին
կառավարիչ, որ գնաց իւր պաշտօնատեղը: Նորա
մահաց յետոյ, որ առանց հիւանդութեան առա-
ւացաւ, Մուսափակիկ գրեց նորա որդի Խաուսիին
կառավարիչ: Գալով Հայաստան նա մեղով գրեց
հայ իշխաններին, որոնցից ոմանք պատասխանե-
ղին (նորան հնազանդելու) համաձայնութեամբ,
Բաղարատ՝ որդի Աշոտի գնաց նորա մօտ իրան
ապահովութիւն ներելու խնդրանք, քակայն
իւստի ուղարկեց նորան Մուսափակիկի մօտ եւս...
(պակասորդ): Խաուսիի հետ ծակատեցաւ Յովնան
որդի, և սպանեց նորան: Այն ժամանակ եր-
կիրը ապստամբեցաւ:

Մուսափակիկ ուղարկեց Բաղայ մեծին,
երբ նա Աղձնիք եկաւ, նորան ներկայացաւ Մու-
սայ ի. Զուրաբ, որ տիրէ էլ Բիլլիսին, իրան
ապահովութիւն խնդրանք: Խալիլայն
Բաղայ կապանքների մէջ գրեց նորան եւ ուղարկեց
Մուսափակիկի մօտ: Այնուհետեւ նա գնաց Աղձնի
կուռն գաւառը եւ պաշարեց Աշոտ որդի Համ-
գայի. ապա ներեց նորան եւ ուղարկեց Մամուսայ,
ուր նորան զխառնեւ եւ խաշել տեց հաւարակալ
գուսն հանդէպ:

Բաղայ գրեց Խահակ ի. Խամայէլին, որ
տիրէ էր Տիղիսին, նորա մօտ գալ. Խալիլայն Խա-
հակ պատասխանեց, որ նա Մուլլիսին հնազան-
դութիւնից գուրա եկած չէ. եթէ նա ինչք կամի,
նա ինչքով կարող է նորան օգնել, իսկ եթէ նա

ԼՍԻ:

Եւս Տարաբի՛ Արաւ Արտուրաս Մուսալ Բի-
լահին:

Եւսարայի մատենագրերի մօտ հաղագրու է
ստեղծել մարտը Հայերի մէջ, որ առիւն է այստեղ
նաղանքը: Մարտանք եւ որ մեր պատմագիրը միւսներին
հետ համաձայն վերին ստեղծանքի հառաւորաւ եւ նկար-
գրու է իսկութեց պատմագրութիւնը եւ Տփղիսի առաւմ:

Եւսարայ կը կարգամ, համապայ թողմայ Արեւու-
նա վայրի թեան յայտ օշ կնապարան քնուծա («Եր ընդ
գրեցար ի լեւանի իսկութայ ճոխան ստեղծ էր 188, հրատ-
գ. Պատմականի, Պետերբուրգ 1887): Եւսարայ արաւ յիշում
է հերոսի նաեւ հայրանանք, որ պակայն սպա աղման
պատմաագ. գտարին է որդի:

(ազգովի) մարդ կամ, նա մարդիկ կ'ազգարկէ նորա մօտ, եւ թէ նա անկարող եղաւ նորա մօտ դալու: Բուդայ արշաւեց նորա վերայ, ճակատեցաւ, յաղթեց նորան եւ կտրել տւեց նորա գլուխը, որ նա ուղարկեց Սուլթանին:

Բուդայ արշաւեց Ծանարաց վերայ եւ պատերազմեցաւ նոցա հետ, սակայն Ծանարաց ի փախուստ դարձրին եւ հայաւեցին նորան: Բուդայ խուսափեց արդեցաւ նոցանից եւ սկսեց հալածել այն բնակիչներին, որոնց նա ապահովութիւն երշնորհել, կոտորելով նոցանից մեծ բազմութիւն: Սոքա գիւմեցի Բունաց կայսեր, խաղաղաց խաղաւ նին եւ Սլաւոնացոց իշխաններին, որոնք մեծ բազմութեամբ միտսին գումարեցան: Բուդայ տեղեկացրեց այս բանի մասին Մուստաֆայիկին, որ նշանակեց երկրի վերայ Մուհամեդ ի. խալիֆ ի. Եղիզ ի. Մազեադ Եայրանիին: Նորա գալովն խուսափարները հանգստացան, ստանալով նորանից (կեանքի) ապահովութիւն:

249 թ. Մուստաֆին ամբարպետը գրեց հայաստանցի Ալի ի. Եահեմ'ին Հայաստանի վերայ, որ խռովեալ գրուելեան մէջ էր: Ալին գնաց Մարտիրոսաց քաղաքը: Եղիզ յաջակեցան եւ արիւնցին մուշկներէ երկրի կիսին. այն ժամանակ երկրի քնակիչք գումարեցան Ալի ի. Եահեմ'ի մօտ, գրեւելով նորան եւ պահանջելով պատերազմել Բունաց հետ: Ալի արշաւեց նոցա հետ, ճակատեցաւ յունաց զօրքի հետ օստակապէս եւ սպանեցաւ: Եղիզ իբրեւ մեծ յաղթութեան նշան վերցրին նորա մարմինը:

(Ըրդան-ի-ի-ի)

Ք. իսլամական



Ի Ե Զ Ո Ւ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն

ՀՅՈՒՆԸ ԱՅՅՈՒՆԸ ԲՈՒԵ

Խորհրդական բառ մին է, որ յոգնեցուցած է երկայն տարիներէ ի վեր լեզուաբանին գիտնոց միաբը: Այս բառը չէր վերլուծուել նաեւ մեր ազգային մատենագրաց մտադրութենէն, որոնց տուած մեկնութեանց մասին բառական է մատուցել Լ. Ղ. Ալիշանի՝ Հին հաւատք Հայոց, սիրուն երկը եւ Մսերայ Մարգ. Զմիւռնացոյ «Խմբագիր Չափածոյ Բանից»¹ գործոյն

¹ Հրատարակիչ՝ Զարմայր Մսերեանց ի Մոսկու 1864. Յանդուածին մէջ 137-44 էջք. հոն մեր մատենագիրներէն յառաջ բերած մեկնութիւններն են:

1. Արաբ. վեհեա. 206 էջ Աստուած կը մեկնէ իրը արարիչ:

2. Խոր. Եպ. Աննա. Մեհի. Ժամակարգ. 99. Աստուած «նա մեզ ստուգարանի, թէ աստ-էստ զմեզ»

3. Ներսէս Լամբ. Մեհի. Պատ. 240 էջ. «Երբեքսն իրացն իրեցեաց զարարիչ» Աստուած, այսինքն՝ աստ անող զուէսն յեւթիւն եւ ի գոյութիւն, չէիք ստպել նաեւ վարք. եւ վանական վարք. «Կաստիս անող, աստած եւն,

յաւելուածը: Պարզ է որ մեր նախաձայրերը արտասանութենէն՝ արտաքին ձեւէն դժուարաւ անգին անցնիլ կրնային. իրենք կը նշմարէին հոն յայտնագէտ աստ-նէս, հաստ-նէս, հաստ-նէս, ողորտսն եւ այլ նման ձեւեր: Զուգադիպութիւն մըն է լոկ, որ ըստ պատահման այս բառերը Աստուծոյ գաղափարը յայտնելու յարմարութիւնը փոքր ի շատէ ունին:

Քանի որ գրութեամբս նպատակ ունիմք աստ-նէս բառին ծագման եւ մեկնութեան մասին մեր տեսութիւնը յայտնելու, բաղձալի է անշուշտ, որ զենք այս առթիւ ընթերցանեցիպ առջիւ, նաեւ այս բառին նկատմամբ յայտնուած կարծիքներն, որչափ որ գոնէ մեր ծանօթութիւնը կը ներէ, յուսով որ այսու ծառայութիւն մ'ըրած կ'ըլլաք բառին ստուգաբանութեան հետեւանելու եւ մեր տեսութեան դիւրմբանելութեան:

Աստ-նէս բառը ստուգաբանել կամ մեկնել փորձող գիտնականները, կամ զայն լուծել կը ջանան եւ կամ օտար անուան մը հետ կը համեմատեն: Առաջիններէն են

1. Dr. Fr. Windischmann, Die Grundlage des Armenischen im arischen Sprachstamme p. 20 ուր աստ-նէս բառը «եմ» (sein) բային հետ ատելութեան մէջ կը դնէ, համեմատելով զայն զնոյ. *astvat* անականին հետ:

2. Dr. K. Gosche, De ariana lingua gentisque armeniacae indole prologomena, 1747 Berolini էջ 7, կը համեմատէ զնոյ-*astu* (existentia) որմէ կը կազմուի *astvat* «գոյութեամբ օժտուած» (= existentia praeditus). ասկից առեալ աշխարհս կ'անուանուի *astvatiti*, իսկ իմաստի կողմանէ աստ-նէս անկ. *astvatdatta* որ կը նշանակէ «ինքնատուր» (per ipsum datus) «ինքնաստեղծ» (= creatus) «ինքնագոյ» (per ipsum existens) նպ. Khodā.

3. Գրեթէ այս կարծիքէն է նաեւ Boeticher, Zur Urgeschichte der Armenier, ein philologischer Versuch էջ 20 (503).

4. Պոլոն. Պատր. Արքեանապոլսեցի արքայ. «Իւհ (յորմէ եւ ասնկ. Ալլահ) աստ-գարանէ Ազգուած, այսինքն՝ ազգեալ» անգ. 142 էջ:

5. Գոնա յառաջ կը բերէ Զանա Յիշտուած՝ աշխարհը պատահեալ, կամ հաշտման, զարեալ յաս (բանս միայն) տուած կամ տուող. եւ վերջապէս նաեւ «Արեւոյ Եղիզ կամ Եղիզան» բառէն փոխառեալ համարողներ: